

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԸ 2017 ԹՎԱԿԱՆՆ ԱՄՓՈՓՈՒՄ Է ԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ ԵՎ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՎԱԾ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐՈՎ**

**Հարցազրույց ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանի հետ**

**1. 2017 թվականի ընթացքում մարզպետարանն ի՞նչ աշխատանքներ է իրականացրել զբոսաշրջության ոլորտում: Իրականացված աշխատանքներն ինչպե՞ս եք գնահատում:**

Ակնհայտ է, որ զբոսաշրջության ոլորտը համարվում է Կոտայքի մարզի առանձնահատկություններից մեկը և այդ ոլորտի անընդհատ զարգացումը համարվում է մեր երկրում իրականացվող պետական քաղաքականության առաջնահերթություններից մեկը:

Հայաստանի Հանրապետության նախագահի մոտ կայացել է Կոտայքի մարզի գերակայությունների, այդ թվում՝ զբոսաշրջային ներուժի զարգացման հնարավորությունների քննարկմանը նվիրված աշխատանքային խորհրդակցություն, որի շրջանակներում հստակ նախանշվել են ոլորտի զարգացման հեռանկարները և երկրի ղեկավարի կողմից տրվել են հստակ հանձնարարականներ:

Հիշյալ խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականների կատարման ընթացքը ՀՀ Նախագահին զեկուցվել է մարզի զբոսաշրջային գոտիներ կատարված համապատասխան այցի շրջանակներում ու մշակվել են նաև առաջիկայի այն ծրագրերը, որոնք ապահովելու են ոլորտի շարունակական զարգացումը և համապատասխանեցումը արդիական չափանիշներին:

Անդրադառնալով կատարված աշխատանքներին՝ պետք է նշեմ, որ մարզում հստակ քայլեր են իրականացվել Ծաղկաձորի, Աղավնաձորի, Մարմարիկի, Հանքավանի, Աղվերանի, Արզնիի հանգստյան գոտիներում, ինչպես նաև Գառնի, Գեղարդ, Բջնի պատմամշակութային վայրերում զբոսաշրջային համապատասխան ենթակառուցվածքների բարելավման և մարզ այցելող զբոսաշրջիկների համար բարենպաստ միջավայր ապահովելու ուղղությամբ:

Մարզում գործում են ավելի քան 75 հյուրանոցային ու հանգստի կազմակերպման համալիրներ և ուրախալի է, որ 2017 թվականի ընթացքում ունենք նախորդ տարվա համեմատ շուրջ 20 %-ի չափով զբոսաշրջիկների թվի աճ:

**2. Մարզպետարանն առաջիկայում զարգացման ի՞նչ ծրագրեր է նախատեսում:**

Այս տարի ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատվել է Կոտայքի մարզի զարգացման 2017-2022 թվականների ռազմավարությունը, որի դրույթների պատշաճ իրականացումն էլ լինելու է մարզպետարանի առաջիկա ծրագրերի առանցքը:

Արդեն իսկ մշակված և հաջորդ տարվա համար նախատեսված ծրագրերի հիմնական նպատակը լինելու է մարզային բոլոր ոլորտների գործունեության արդյունավետ կազմակերպումը և տնտեսության տարբեր ճյուղերում առաջընթացի ապահովումը:



### **3. Որո՞նք են մարզի գերակա խնդիրները. դրանցից որո՞նք լուծվեցին 2017-ին և որո՞նք լուծում չստացան:**

Մարզի զարգացման ռազմավարության մեջ հստակ ամրագրված են հիմնական գերակա խնդիրները՝ դիվերսիֆիկացված արդյունաբերության զարգացում, գյուղատնտեսության արդիականացում և զարգացում, զբոսաշրջության զարգացում և այլն:

Թվարկած բոլոր ուղղություններով մենք 2017 թվականին ունենք լուծված խնդիրներ և գրանցված դրական արդյունքներ. միաժամանակ ունենք նաև անելիքներ, որոնք ընդգրկված են 2018 թվականի ծրագրերում ու պետք է վստահ լինենք, որ եկող տարի արձանագրելու ենք առավել բարձր ցուցանիշներ:

Հավելենք, որ 2017 թվականին մարզում մեկնարկել են շուրջ 105 ներդրումային ծրագրեր՝ 63.3 մլրդ դրամ ընդհանուր արժեքով, որոնց իրականացման արդյունքում կստեղծվի գրեթե 2600 աշխատատեղ:

### **4. Ի՞նչ առաջընթաց եք գրանցել կրթության, գյուղատնտեսության, առողջապահության և աղբահանության ոլորտներում:**

Նշված բոլոր ոլորտներում ունենք նկատելի առաջընթաց: Մարզում այս տարի նորովի արդյունավետություն հաղորդվեց կրթօջախների և առողջապահական հիմնարկների գործունեությանը՝ նպատակ ունենալով առավել կատարելագործել վերջիններիս աշխատանքը: Մարզում հաջողությամբ ներդրվեց էլեկտրոնային առողջապահական միասնական տեղեկատվական համակարգը, շահագործման հանձնվեց Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և համայնքի համաֆինանսավորմամբ կառուցված <<Քաղսիի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի նոր շենքը, բուժ.հաստատություններում իրականացվեցին <<Բաց դռների օր>> ավանդական միջոցառումները և կիրառվեցին մարզի բնակչության համար որակյալ ու մատչելի բուժսպասարկում ապահովելուն միտված նոր մեխանիզմներ: Քննարկվեցին առողջապահական հիմնարկների գործունեության բարեփոխումներին վերաբերող մի շարք առաջարկներ: Հիմնանորոգման զգալի աշխատանքներ կատարվեցին մարզի շատ հանրակրթական դպրոցներում, էականորեն բարելավվեցին դպրոցական կայքէջերի աշխատանքները, ոլորտում կտրուկ ավելացավ որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը, մարզի առավել մեծ թվով սաներ հաջողություններ ունեցան հանրապետական և միջազգային մրցույթներում ու փառատոններում, ինչպես նաև առարկայական օլիմպիադաներում և բարձրագույն ուսումնական հաստատություններ դիմելու համար կազմակերպվող միասնական քննություններում:

Ինչպես արդեն նշեցինք մարզի զարգացման գերակա ուղղություններից է գյուղատնտեսության ոլորտը: Անդրադառնալով այս ոլորտին նշենք, որ վերջին տարիներին մեծ ծավալներով իրականացվում են ժամանակակից տեխնոլոգիաներով ջերմոցային տնտեսությունների և ինտենսիվ այգիների հիմնման աշխատանքներ: 2017 թվականին մարզում պատշաճ կերպով իրականացվեց <<Կառավարության <<Մաքուր Հայաստան>> ծրագիրը, որի շրջանակներում կատարվեցին մարզի 184 աղբանոցների և աղբավայրերի փակմանն ուղղված աշխատանքներ: Արդյունքում փակվել են 166-ը, իսկ 8-ի /բացի հիմնական 10 աղբավայրերից/ փակման աշխատանքները կիրականացվեն <<Կառավարության կողմից տրամադրվող համապատասխան ֆինանսական միջոցների հաշվին: